ԲՈԼԵՍԼԱՎ ՊՐՈՒՍ

ՁԵՂՆԱՀԱՐԿԻ ԲՆԱԿԻՉԸ

Գիտուն հրեա պան Լեյզեր Սկովրոնեկը ճերմակած գլխի վրա ուղղեց թավշյա թասակը, թափ տվեց հախճապակյա ծխամորճի մոխիրը և, այն մտցնելով լաստիկե խալաթի ետին գրպանը, կանգնեց կեղտոտ նախասենյակի մեջտեղը՝ խորհելով մի դժվար հարցի շուրջ, թե ո՞ր ելքից դուրս գա փողոց:

Եթե դուրս գա կանաչ դարպասից, ապա հավանաբար կհանդիպի մսավաճառին՝ եզները քշելիս, պառավին՝ դույլը, հացը կամ շիշը ձեռքին և, ամենայն հավանականությամբ, կտեսնի գորշագույն փայտե տունը, որի ներքնահարկում թիթեղագործն է ապրում, իսկ կիսավերնահարկում... Պան Լեյզերը ծամածռեց դեմքը, շուռ եկավ և քայլեց դեպի դեղին դարպասը:

Այստեղ ամեն ինչ իրեն է պատկանում, և դռնապանը, որն իր առջև գլխարկը ձեռքին խոնարհ կանգնած է, և քառակուսի բակը մեջտեղի մեծ ցախատնով, և կարմիր բարձերը, և կապույտ քառակուսիներով փետուրե վերմակները, որոնք փռել են բակում չորանալու: Անգամ պատին հենած փայտյա սանդուղքը, որի ներքևից երրորդ աստիճանի վրա ճկունության հրաշքներ է ցույց տալիս իր երկար գանգուրներով որդին՝ Դավիդկան, երկրի վրա բնակվող Սկովրոնեկների մեջ ամենախելացի գլուխ ունեցողը: Այո, այս ամենն իրեն է պատկանում:

Բայց մի՞թե միայն այսքանը... Իսկ ցախանոցի ետևի փայտյա տնա՞կը՝ վերնահարկի ութ և առաջին հարկի հինգ պատուհաններով... Իսկ այն մյուսում՝ աջից երեք դռներով և թիթեղյա տանիքով... Իսկ մա՞յթը, որի վրայով փոքրիկ Յոսեկը քաշում է ոտքերը վերև տնկած աթոռակը, իսկ ձախից կիսաքանդ այն խրճի՞թը, որի մոտ իրար վրա դարսված համարյա փտածփայտերի վրա խաղում են երեք կեղտոտ քրքրված շորերով երեխաներ, և աղմուկով տակառին է հարվածում տակառագործը:

Խղճուկ խրճիթ է: Այստեղ ոչ մի տախտակ չկա, որ ճեղք չունենա, ոչ մի փակվող դուռ, ոչ մի պատուհան չկա, որ հնարավոր լիներ բաց անել չվախենալով, թե այն չի պոկվի: Սևացած ու մամռապատ տանիքն այնպես անհարթ է, այնպես է ծռմռված, որ ամենափորձված երկրաչափն անգամ փորձ չէր անի այն չափել: Իսկ այդ տանիքի տակ այնպիսի աղքատներ են ապրում... Ախ, այնպիսի դժբախտներ, որ խղճահարությունից դրդված ռեբ Լեյզերն արդեն հինգերորդ ամիսն է, ինչ փորձ չի անում նրանց հիշեցնել տան վարձի մասին:

Սկովրոնեկի դեղնավուն աչքերը նայեցին տանիքի կոտրված պատուհանին, որտեղից արդեն մեկ ժամ էր, ինչ դուրս էր հորդում գոլորշու թանձր ամպը: Այդչափ գոլորշու առկայությունը խոսում էր շատ ուժեղ վառվող կրակի մասին: Իսկ ուժեղ կրակը...

— Ախ՛... ախ՛,— փնթփնթաց գիտուն հրեան,— նրանք դեռ իմ տունն էլ կվառեն:

Նա դանդաղորեն մոտեցավ տակառագործին:

— Փառք աստծուն, Մարթին:

— Հավերժ փառք,— պատասխանեց տակառագործը, ձեռքը տանելով դեպի գլխարկն ու հավաքելով գործիքները:

— Այդ ինչո՞ւ է Յակուբի բնակարանում այդպիսի կրակ վառվում:

— Դե դա կինն է... Լվացքի համար ջուր է տաքացնում:

— Այո, այո... Իսկ ինչպե՞ս է ամուսնու առողջությունը:

Տակառագործը ձեռքը թափ տվեց:

— Երբեմն թվում է, թե նա հարբած է,— շարունակեց հրեան:

— Ի՞նչ հարբած: Պարզապես ընկել է փայտամածից ու դրանից հետո մի փոքր տարօրինակ է դարձել... Էհ... խելքը տեղը չէ,— բացատրեց տակառագործը:

— Այո, այո... Ես էլ այդ մասին անմիջապես մտածեցի, երբ մի անգամ նա ինձ համար փայտ կոտրեց: Մի ժամ էլ չէր աշխատել, անմիջապես հոգնեց: Ինչ է, հիվանդանոցում նրան բոլորովին չօգնեցի՞ն:

— Կօգնեն, ինչպես չէ: Ոտքն անգամ չբուժեցին:

— Ֆրանե՛կ, ապա այստեղ արի,— տանիքից մի ձայն լսվեց, և կոտրված պատուհանից խոսակիցներին նայեց դեղին գլխաշորով կանացի մի գլուխ:

— Փոքրիկ ցնցոտիավորներից մեկը, որը տանտիրոջը տեսնելով թաքնվել էր փայտերի ետևում, վազեց դեպի աստիճանները:

— Այդ նրա՞ երեխաներն են,— հարցրեց Լեյզերը:

— Նրա,— հաստատեց Մարտինը:— Երեքն այստեղ են, բակում, իսկ երկուսը տանը հիվանդ պառկած են:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ,— փնթփնթաց հրեան և, գլուխը կախելով, սկսեց լսել, թե ինչ են խոսում վերնահարկում:

— Ու՞ր է երեկվա թասի միջի կարտոֆիլը, ու՞ր է,— հարցնում էր կանացի բարկացած ձայնը:

— Որտեղի՞ց իմանամ, մայրիկ,— ոչ այնքան հաստատուն պատասխանում էր մանկական ձայնը:

— Ստո՛ւմ ես: Դու այն կերել ես գիշերը: Յուզյան է տեսել: Ես քեզ ցույց կտամ, դու...

— Աստված վկա, մայրիկ... Թող իմ ոտքերն ու ձեռքերը չորանան, թող ինձ խոլերան տանի...— Հարվածների հետ համահավասար ճչում էր տղան:

— Այ քեզ, ա՛յ քեզ,— գոռում էր կինը:— Էլի կխաբե՞ս, էլի կգողանա՞ս... սուտ երդում կուտե՞ս, ա՛յ քեզ:

Ամեն մի բառն ուղեկցվում էր ցնցոտիավոր տղայի նիհար մարմնի տարբեր մասերին հասցվող խոնավ շորի հարվածների ձայնով: Իսկ վերջինս հոնգուր-հոնգուր արտասվելով գոռում էր.

— Ես մեղավո՞ր եմ, որ ինձ ուտելու բան չեք տալիս, հա՞: Երեկ երեկոյան ես ընթրեցի՞, իսկ առավոտյան նախաճաշե՞լ եմ, հը՞: Այդքանից հետո էլ դեռ ծեծում ես ինձ, ու՛ ու՛...

Անհավատալի աղմուկ բարձրացավ: Պատժող մոր և պատժվող որդու գոռգոռոցներին միացան վերնահարկում գտնվող երկու երեխաներն ու ներքևում խաղացողները: Հրեայի համբերությունը վերջապես հատավ: Մի փոքր մտածելուց հետո նա մտավ նախամուտք, բարձրացավ կիսախարխուլ ու կեղտոտ աստիճաններով և, հոգնածությունից շնչահեղձ լինելով, կանգնեց գոլորշիով և օճառաջրի ծանր հոտով լցված սենյակի դռների մեջ:

— Յակուբովա՛: Պանի Յակուբովա, ձեր տանն ինչո՞ւ միշտ այդպիսի աղմուկ է տիրում:

— Օ՛, պան տանտե՛ր,— քրջոտ շորերով կինը զարմացավ, ապա լաց լինելով ավելացրեց:— Ի՞նչ անեմ ես, դժբախտս, այս քոսոտների հետ, երբ նրանցից ոչինչ չես թաքցնի և ոչ մի կերպչես կերակրի... Սա անգործ է մնացել, իսկ երեխաները հինգն են և բոլորն էլ ուտել են ուզում, իսկ ես կաշվից դուրս եմ գալիս: Քիչ է մնում միջիցս կիսվեմ...

— Ահա թե ինչ կասեմ ձեզ, Յակուբովա,— բարկացած ընդհատեց նրան Լեյզերը:— Այն, որ դուք աղքատ եք, դա ճշմարիտ է: Բայց ճշմարիտ է նաև այն, որ դուք իմ տանը շարունակ անկարգություն եք անում և չեք վճարում: Ձեզ մոտ շարունակ լվացք ու խոնավություն է, շոր եք չորացնում, քայլում եք տանիքում, մոմ եք վառում և անընդհատ ձեզ մոտ աղմուկ է... Իսկ վճարել դուք չեք վճարում և արդեն հինգ ռուբլի պարտք եք ինձ: Ձեր աղմուկ-աղաղակից գլուխս պտտվում է, դուք իմ տունը կրակի կտաք, դուք... դուք... գնացեք այստեղից... Ոչ ձեզ եմ ուզում տեսնել, ոչ էլ ձեր փողը:

— Վա՛յ, պան տանտեր,— ճչաց կինը:— Աստծո սիրուն, դուք այդ չեք անի, մի փոքր էլ համբերեք:

— Ի՞նչ է նշանակում համբերեք... Ես արդեն հինգ ամիս է համբերում եմ:

— Գուցե ամենակարող աստվածը մեզ կխղճա և իմ ծերուկին որևէ աշխատանք կուղարկի: Այն ժամանակ ամեն ինչի համար էլ կվճարենք:

— Աշխատանք, աշխատանք,— փնթփնթաց հրեան:— Մի՞թե դուք հոգ եք տանում որևէ բանի մասին: Մի՞թե դուք չվռնդեցիք ձեր տանն ապրող այն աղջկան:

— Դուք ճիշտ եք, պան տանտեր, բայց այն էլ պետք է ասել, որ նա այնքան անպատկառն էր, որ և մեզ և ձեզ անպատվություն բերեց: Բարի եղեք, պան Լեյզեր,— շարունակեց կինը՝ ձեռքերն աղերսանքով նրան մեկնած,— գոնե այս փոքրիկներին խղճացեք:

Տանտերը հայացքով չափեց սենյակը: Այժմ ներկա էին ընտանիքի բոլոր անդամները: Երեք նիհար փոքրիկներ, չափից ավելի մեծ փորով խցկվել էին լվացքի տաշտի և սեղանի մեջտեղը, որի վրա դարսված էին խոնավ շորերը: Չորրորդը պառկած էր մահճակալի վրա ինչ-որ սև շորով ծածկված, հինգերորդը փայտյա արկղի մեջ, ծղոտի վրա,— իսկ նրանց դժբախտ հայրը քրքրված շորերով, տարօրինակորեն վեր ցցված բեղերով, վախեցած հայացքով հենվել էր վառարանին, ծակ դույլի մոտ, որի վրա քիչ առաջ նստած էր:

Հրեայի խիստ դեմքի վրա հուզմունք երևաց:

— Նրան ի՞նչ է պատահել,— մեղմ հարցրեց, նայելով արկղի կողմը:

— Իմ պան, նա շարունակ հազում է,— պատասխանեց մայրը:

— Իսկ մյուսի՞ն,— տանտերը ցույց տվեց մահճակալը:

— Սա աղջիկ է, պատահականորեն այրվել է եռացրած ջրով:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ,— բացականչեց տանտերը և թեքվելով դեպի Յակուբը, հարցրեց:— Իսկ ձեզ ի՞նչ է պատահել, Յակոբ:

Խեղճը թափահարեց գլուխը և ծռմռված մատներով սկսեց ճանկռոտել վառարանը, բայց լռեց:

— Դե՛հ, պատասխանիր պան Լեյզերին,— մեջ ընկավ կինը:

Յակոբը շարժեց շուրթերը, իր կլոր փոս ընկած աչքերով վախեցած նայեց տանտիրոջը, բայց շարունակեց լռել:

— Դե լավ, աստված ձեզ հետ, մնացե՛ք,— շշնջաց հրեան ու արագորեն դուրս եկավ սենյակից:

— Աստված ձեզ առողջություն տա,— բազրիքից ցած կախվելով ու հետևելով ցած իջնող տանտիրոջը, պատասխանեց կինը:

Նախասենյակում հրեային կանգնեցրեց տակառագործը:

— Ինչպե՞ս է նա, պան Լեյզեր:

— Աստված նրան օգնական լինի, շատ դժբախտ մարդ է,— ասաց հրեան ու հեռացավ:

***

— Էհ, փառք աստծո,— ինքն իրեն խոսում էր պանի Յակուբովան, անգթաբար տրորելով կասկածելի գույնի ինչ-որ լաթ, հավասար ուժերով ձգելով աջ ձեռքով, իսկ ձախով սեղմելով ջրով լի տաշտակի հատակին:— Փառք աստծո, օրն այսօր հաջող սկսվեց: Տաք ջուր կա, օճառ նույնպես կա և աշխատանք՝ մոտ հիսուն կոպեկի: Տանտերը թերևս մի ամիս էլ կսպասի: Ֆրանե՛կ, ածուխը փայտով մի խառնիր, թե չէ էլի մի բան կանես: Մի երկու օր հետո խանութպանի տան հատակը կլվանամ, գուցե դրանից հետո նա շարունակի մեզ պարտքով տալ, իսկ գուցեև իր քրոջ որդուն, այն, որ բուժակ է, կուղարկի Յուզային բուժելու: Մանյուսյա՛, կարտոֆիլ մաքրիր, Ֆրանե՛կ, վազիր խանութ մի հաց խնդրիր, ասա, որ փողը վաղը չէ մյուս օրը կտանք: Սոշկովան ասում էր, որ իր քրոջ տղան ամեն մի բժշկից էլ լավ է: Գուցե, ծերուկ, նա քեզ էլ որևէ խորհուրդ կտա:

— Ախ, մայրիկ, այնպես է ծակում,— խուլ ձայնով ասաց արկղի մեջ պառկած տղան և հազաց:

— Ծակում է, դու էլ նրան ծակիր: Ես քեզ ինչո՞վ կարող եմ օգնել,— բարկացավ մայրը:— Ծերուկ, սրանց վրա էլ ուշադրություն դարձրու,— դարձավ նա անշարժ նստած ամուսնուն:— Չէ՞ որ դրանք քո երեխաներն էլ են, օգնիր: Ախ, երանի ես քոռանայի, քան քեզ հետ ամուսնանայի:

Այդ պահին աստիճանները ճռճռացին, դռան մոտ երևաց դեռևս երիտասարդ, սակայն աղքատ հագնված նիհար մի կին:

— Պանի Յակուբովա, թանկագինս,— ներս մտնելով, բացականչեց նա,— շտապ ետ տվեք կաթսան ու տաշտակը, թե չէ պառավը գլուխս կպոկի:

— Կաթսան ու տաշտա՞կը,— սարսափահար կրկնեց լվացարարուհին:— Կաթսան ու տաշտա՞կը: Հապա ինչպե՞ս վերջացնեմ լվացքս:

— Սիրելիս, իսկ ե՞ս ինչ անեմ: Քանի դեռ հնարավոր էր, ես գաղտնի տալիս էի, իսկ այժմ, երբ ամեն ինչ հայտնի է դարձել, պառավը ոչինչ լսել չի ուզում, ձեզ գող է անվանում, գոռում է, որ ոստիկանատուն կգնա: Իսկ եթե դուք անմիջապես կաթսան ու տաշտակը չտաք, ապա նա այստեղ կհավաքի Վարշավայի ողջ ոստիկանությանը:

Լվացարարուհին երկու ձեռքերով ամուր բռնեց տաշտակի կողերից:

— Չե՛մ տա կաթսան, չե՛մ տա տաշտակը, ոչինչ էլ չեմ տա: Ոչ մի տեղից այլևս չեմ կարողանա ճարել: Տանն էլ ուտելու ոչինչ չկա, իսկ գործը շտապ է:

Այցելուհին թափահարեց գլուխը:

— Աստծուց վախեցեք, բարեկամս, ախր այդ ի՞նչ եք ասում: Իմ բարության փոխարեն դուք ուզում եք ինձ էլ ձեզ հետ բաժանմո՞ւնք քարշ տալ:

Անօգնական, դժբախտ մոր վայրի բռնկումը շարունակվեց դառն արցունքներով: Ի՞նչ պետք է աներ, ի՞նչ իրավունքով նա չէր վերադարձնի իրեն չպատկանող իրերը: Եվ տարօրինակ չէ, որ երկարատև խնդրանքներից ու գոռգոռոցներից հետո ինքը տաշտակից հանեց թաց սպիտակեղենն ու օգնեց թափելու տաք ջուրը, որի համար նույնիսկ բարի տակառագործի մոտ ոչ մի հարմար ման չճարվեց:

Այդ, թվում է, աննշան դեպքը ասես լրիվ ցնցեց խեղճ կնոջը:

Նա փուլ եկավ սենյակում եղած միակ աթոռակի վրա և, դեմքը գոգնոցով ծածկելով, բարձրաձայն լաց եղավ:

— Այ քեզ կին, այ քեզ երեխաներ,— աղիողորմ հեծկլտում էր նա,— ամուսնանա՞լ էիր ուզում, այ քեզ ամուսնություն... Ամեն ինչ իմ ուսերին է բարդված: Իսկ ես ի՞նչ անեմ, երբ վերջին տաշտակն անգամ ստիպված եղանք ջհուդներին վաճառելու:

Դռների մեջ երևաց հուզված, կարմրած Ֆրանեկը:

— Մայրիկ,— ասաց նա,— խանութում հաց չտվեցին: Հետո ասացին, որ դուք առաջվա պարտքը դեռ չեք վճարել:

— Աստված իմ... Որտեղի՞ց փող ճարեմ, երբ վերջին գրոշը օճառի վրա ծախսեցի:

— Մայրիկ,— մահճակալի վրայից ձայն տվեց հիվանդ աղջնակը,— մայրիկ, մենք, ինչ է, այսօր բոլորովի՞ն չենք ուտելու...

Եվ խեղճ երեխան վախեցած հայացքով նայեց մոր արտասվախառն դեմքին:

Կինը կախեց գլուխը, աշխատելով չնկատել փոքրիկի հոգեմաշ հայացքը, բայց դրա փոխարեն նա տեսավ տղայի դեղնած դեմքը: Նա հազում էր, արկղի միջից վեր ձգելով իր զզգզված գլուխը: Հայացքը թեքեց դեպի դուռը, բայց այստեղ էլ հանդիպեց երեք զույգ աչքերի, որոնք անվստահորեն հաց էին խնդրում: Վերջապես նա թեքվեց դեպի վառարանը, սակայն այնտեղից էլ անօգնական աղաչանքով նրան էին նայում դժբախտ ամուսնու ներս ընկած, կլոր աչքերը:

Այնժամ այդ կնոջ սրտում հուսահատությունն ու դժբախտությունը փոխվեցին կատաղության, արցունքները չորացան և խղճուկ, անօգնական լվացարարուհին փոխվեց կատաղի մայր գայլի, որը վտանգ զգալով, որոշեց պաշտպանել իր զավակներին:

— Ապա լսիր, ծերուկ,— ատամների արանքից ֆշշացրեց նա՝ ամուսնու ուսին դնելով աշխատանքից կոշտացած ծանր ու թաց ձեռքը:— Լսի՛ր ինձ և շարժվիր: Տեսնո՞ւմ ես, տանը ոչինչ չկա ուտելու:

Ծերուկը լռում էր: Կինը ցնցեց նրան:

— Ծերուկ, իսկ այժմ որևէ բան դու մտածիր: Ինչքան չլինի տղամարդ ես, թե չէ իմ ձեռքից ամեն ինչ ցած է ընկնում: Գնա մարդկանց մոտ, աշխատանք փնտրիր կամ էլողորմություն մուրա, միայն թե տանը հաց լինի, թե չէ երեխաների հետ ես այլևս չեմ կարողանում...

Ծերունին շարունակում էր լռել ու թափառող հայացքով նայել հեռուն: Կինն ավելի ցած կռացավ դեպի ամուսինն ու խուլ արտաբերեց:

— Գնա՛, դե գնա՛... Քեզ ասում եմ գնա՛: Որևէ բան կանես, թե ոչ, քո գործն է, միայն թե իմ աչքից հեռու եղիր, այլապես կամ դու չես ապրի, կամ ես:

Դժբախտն ուշքի եկավ: Հասկանո՞ւմ էր նա որևէ բան, թե ոչ, դժվար է ասել, բայց ես համոզված եմ, որ նա ամեն ինչ զգում էր: Նա զգում էր սենյակի խոնավությունը, զգում էր սով, ցավ՝ փշրված ոտքում և այն, թե ինչպես է պտտվում իր դժբախտ կոտրված գլուխը: Եվ ամենակարևորն այն է, որ զգում էր թե սեփական բնում տեղ չունի այլևս:

Երբ դույլի վրայից վեր կացավ, կինը նրա գլխին հագցրեց գլխարկն ու թեթև հրեց դեպի դուռը: Նա նույնիսկ ետ չնայեց, բայց ներքև իջնելիս լսեց տղայի ձայնը:

— Դե լավ, լաց մի լինիր, Մանկա, հայրիկը քաղաք՝ գնաց, մեզ հաց կբերի, իսկ գուցե, ինչպես մի ժամանակ, ապխտած միս էլ...

***

Տանից դուրս գալով, դժբախտը զարմացած կանգնեց դարպասի մոտ: Նրան զարմացնում էին պայծառ օրն ու արևի ջերմությունը, զարմացնում էր անցորդների ուրախ դեմքերն ու այն, որ նրանք չէին բողոքում և հաց չէին խնդրում: Զարմացրեց փողոցի լայնարձակությունը, որտեղ նա կարող էր ազատ շնչել՝ չզգալով օճառաջրի հոտը և շարժվելով, չտեսնել իր վրա հառված սոված երեխաների հայացքն ու հուսահատության մատնված կնոջը: Նրա խավարած ուղեղը մի փոքր պարզվեց, և Յակուբը հիշեց, որ հաց ճարելու համար ինչ-որ տեղ պետք է գնա:

Գնալ, բայց ո՞ւր: Ա՞ջ, թե ձախ: Ձախ կողմից փողոցն անհարթ էր ու վատ սալահատակված, իսկ աջից՝ հարթ մայթն էր: Յակուբի փշրված ոտքը ցավում էր, և նա գնաց աջ կողմով: Կարո՞ղ էր նա պատկերացնել, որ այդ թույլ շարժման բնազդը, ձգելով նրան դեպի հարթ ճանապարհը, ճակատագրական հարված էր լինելու, որը այսօր արդեն պիտի ջախջախեր նրա գանգը:

Անկյունին հասնելով, նա ընդհարվեց կապույտ վերնազգեստով դռնապանին, որը բացառիկ ջանասիրությամբ ավլում էր ետ ընկած գինետան աստիճանները:

— Էզե,— բացականչեց դռնապանը,— նշանակում է լավ եղանակ է լինելու, եթե Յակուբը որոշել է դուրս գալ: Ինչպե՞ս եք ապրում:

— Շնորհակալ եմ, պան Վալենտի,— շշնջաց Յակուբը, երկարատև լռությունից հետո նոր միայն խոսելով:

— Այդ ինչո՞ւ մի շաբաթ է չէիք երևում: Մարդիկ ասում են, թե ձեր տանը դժբախտություն է պատահել:

— Իսկապես որ դժբախտություն,— պատասխանեց Յակուբը,— ես աշխատանք չունեմ:

— Աշխատա՞նք: Հիմա ո՞վ ունի դրանից: Նույն բանն է, ինչ փողը: Դրանք բուն են դրել միայն հարուստների ու հրեաների մոտ… Դե, գնանք թեյարան:

Այս ասելով, նա Յակուբին տարավ գինետուն, որտեղ բացի տիրոջից՝ խորամանկ դեմքով մի հրեայից, նստած էր, ավելի շուտ մեծ տակառին հենված ննջում էր ինչ-որ տղամարդ: Նա ճմռթված գլխարկով և գունաթափված սերթուկով էր, որի օձիքը ճերմակ էր, այնուհետև աստիճանաբար փոխվում էր դարչնագույն դեպի մեջքը և վերջանում մուգ դարչնագույնով՝ գրպանների մոտ:

— Ա՜-ա՜-ա՜, մեր պան Յակուբը,— բացականչեց գինետան տերը,— ինչպիսի՜ հյուր: Հարկավոր է վառարանի վրա ածուխով գրել: Ձեզ այդ ի՞նչ է պատահել:

— Յանկել, ապա օղի լցրու, շո՛ւտ,— հրամայեց Վալենտին:

— Պան Յակուբ, դուք մինչև հիմա որմնադի՞ր եք աշխատում:

— Ինչպես չէ, աշխատում է: Փայտամածից գլխի վրա ցած է ընկել, իսկ հիմա անցել է թոշակի… Դե՛, արա՛գ, օղի տո՛ւր,— գոռաց Վալենտին:

— Իսկ փո՞ղը,— ձեռքերը մեջքին դնելով ու ճոճվելով հարցրեց հրեան:

— Ի՞նչ փող: Առանց փողի չի կարելի՞: Ես հյուրասիրում եմ,— նետեց Վալենտին:

— Դո՞ւք եք հյուրասիրում: Այդ դեպքում որքան ալյուրն է,այնքան էլ հացը կլինի… Ուրեմն՝ ոչինչ,— եզրակացրեց Յանկելը:

— Ա, ձեր մերը… Պան Վալենտի,— անսպասելիորեն ոտքի ելավ տակառի մոտ ննջող գունաթափված սերթուկով տղամարդը:— Ա՜… հարգանքներիս հավաստիքը: Թույլ տվեք իմանալ, այդ ի՞նչ քրջոտ է եկել քեզ հետ:

— Սա իմ ծանոթն է,— պատասխանեց դռնապանը,— պան Յակուբը որմնադիր էր աշխատում, բայց ցավոք, ջախջախվել է, իսկ հիմա էլ աշխատանք է փնտրում:

— Հա՛, հա՛, հա՛… Աշխատանք գինետա՞նը: Աշխատանքը դատարկ բան է: Ողջ Եվրոպայում հիմա աշխատանք չես ճարի, միայն օղի կճարես… Եթե դու փող ունես… Յանկել, մկնիկս, ապա ինձ համար մի բաժակ լցրու…

— Նորից պարտքո՞վ,— լացակումած հարցրեց հրեան:— Առավոտից որքա՞ն եք ինձ պարտք և դեռ էլի՞ եք ուզում:

— Առավոտից ես քեզ ի՞նչ եմ պարտք, շուն շան որդի, այդ ե՞ս, քեզ պարտք ե՞մ…

— Իսկ գուցե ո՞չ… Առավոտից դուք օղաբլիթ կերաք, հետո օղի խմեցիք, հետո նորից խմեցիք և էլի երկու անգամ խմեցիք, ու նորից եք ուզում խմե՞լ…

— Պան Իգնացի,— սկսեց Վալենտին,— դուք պան Յակուբի համար խնդրագիր չէի՞ք գրի ուղղված կարևոր պարոնների, որպեսզի գոնե մի փոքր օգնեն մարդուն:

— Խնդրագի՞ր, այս աղքատի համա՞ր,— զարմացավ Իգնացին, թեպետ սեփական կոստյումի թերությունների հանդեպ միանգամայն բարեհոգի վերաբերմունք ուներ:— Ու՞մ է պետք այդ ամենը, ի՞նչ արժեն այդ խնդրագրերը, դուք ինձ հարցրեք: Ես ինքս եմ նամակով գնացել, որի մեջ գրված էր… Օղի՛, ծեր շուն…

— Օղի չկա,— վճռականորեն հայտարարեց հրեան:

— Այդ նամակում,— շարունակեց պան Իգնացին,— սևով սպիտակի վրա գրված էր, որ ես՝ Իգնացիս, ծնված օրվանից խուլ ու համր եմ և, բացի դրանից, սնանկացած վարպետ, խոնարհաբար խնդրում եմ խնամակալել… ես… պայծառափայլ պարոններ… Եվ դուք ի՞նչ եք կարծում: Գուցե կարծում եք, թե նրանք որևէ մեկին օգնո՞ւմ են: Ոչ: Նրանք կարող են հայհոյել հարբեցողներին, ինձ… Ինձ նույնպես հարբեցողհամարեցին… Օղի՛, կովի պոչ… թե չէ կսպանեմ քեզ… կայրեմ, դատարաններում քարշ կտամ… Դե՞…

Այդ պահին աղմուկ-աղաղակով ներս ընկավ ինչ-որ կին:

— Նորից դու գինետանն ես, հա՞, ծույլ արարած, նորի՞ց, այ ես քեզ…

— Մագդա, Մագդուսյա,— հազիվ շշնջաց զարմացած Վալենտին,— Ես… ոչինչ… Ես միայն Յակուբի հետ…

— Յակուբի հե՞տ,— ճչաց կինը:— Եվ դու չե՞ս ամաչում Յակուբի հետ քայլելով: Ախր նա ամենավերջին աղքատից էլ վատն է: Բավական չէ, որ ինքը ուտելու բան չունի, դեռ երեխաների բերանից էլ է հացը կտրում:

Գոռգոռալով այդ խոսքերը, նա բռնեց ամուսնու օձիքից:

— Վալյուս… Չհանձնվես, դու, տավարի ցավ,— ոգևորում էր նրան պան Իգնացին:

— Դու էլ նրա հետ, հարբեցողի մեկը, դու էլ… Ես հիմա ձեր երկուսին էլ…

Եվ սպառնալիքն ի կատար ածելով, նա աստիճաններով ցած հրեց ամուսնուն ու պան Իգնացիին, ոտքով վարպետորեն հարվածներ հասցնելով նրանց՝ պան Իգնացիի սերթուկի վրա բավականին մեծ հետքեր թողնելով:

Յակուբը նրանց ետևից դուրս ընկավ:

— Թո՛ւհ, այ թե կախարդն է,— Յակուբին դիմելով նկատեց Իգնացին, երբ ամուսիններն անհետացան տեսադաշտից,— փառք ամենակարող աստծուն, որ նա ինձ չէ բաժին ընկել, թո՛ւհ…

Շվշվացնելով ու ճոճվելով, նա բռնեց Յակուբի թևից ու քարշ տվեց իր ետևից:

— Ի՞նչ էր քո անունը, իմ քաղցրիկ,— սկսեց հաճոյախոսել Իգնացին:

— Յակուբ,— զարմացած պատասխանեց աղքատը:

— Գիտե՞ս ինչ, սիրելիս, ես… ես… քեզ մի բան կասեմ: Դու հիմար ես, եթե աշխատանք ես փնտրում: Աշխատանքը քեզ նմանների համար չէ: Աշխատանքը հիմարություն է և, ընդհանրապես, ամեն ինչ հիմարություն է:

— Ես քեզ ասում եմ,— շարունակեց նա,— ի՞նչ էր անունդ:

— Յակուբ:

— Ասում եմ քեզ, սիրելի Յացուս, աշխարհում ամեն ինչհիմարություն է: Եվ այս արևը, հա՛ փչխի՛… Ես միշտ փռշտում եմ, երբ նայում եմ արևին… Արևն էլ է հիմարություն, հողն էլ, տներն էլ, հարստությունն էլ… Այնպիսի մի գրագետ մարդ, ինչպիսին ես եմ, դարձյալ չի կարողանում ինքն իրեն կերակրել, մնաց թե դու… Օ՜, մարդկային կուրություն: Դեհ, ինչպե՞ս էր քո անունը, ոչ մի կերպ չեմ կարողանում հիշել:

— Յակուբ:

— Ուրեմն այսպես, սիրելի Ենդրուս, եթե ես իմ առաքինի ստով ստիպված լինեի կտրել իմ երեխաների հացը և երկրի վրա ավելորդ լինեի, ասում եմ քեզ, կգնայի կամուրջ և..., ազնիվ խոսք… ջուրը կնետվեի… Կնետվեի ջուրը, որպեսզի ոչ ոքի չխանգարեի… Սիրելի Յուզեկ… Իսկ գուցե դու ափսոսո՞ւմ ես հրաժեշտ տալ այս անհիրավ աշխարհին,— ավելացրեց պան Իգնացին, պղտոր հայացքը գցելով Յակուբի վրա:— Ենդրուս, իմ տատրակ, հիմար մի լինիր: Այն ամենը, ինչ դու տեսնում ես շուրջդ, փուչ է ու դատարկություն: Նույնիսկ թքել չարժե դրանց վրա, հավատա ինձ...

Հանկարծ նա կանգ առավ, մատը վերև բարձրացրած, կարծես փորձում էր կանգնեցնել արհամարհանքի հեղեղը, որն արագորեն պիտի թափվեր իրենց շրջապատող իրականության վրա: Եվ այն տեղը, ուր այժմ իրենք գտնվում էին, բոլորովին չէր արդարացնում գուցե և ճշմարիտ, բայց խոսակիցների բուռն զզվանքը դեպի աշխարհը: Ահա ջրատար խողովակը, ահա գինետունը, ներքնահարկում՝ պանդոկը, կողքը՝ բանջարեղենի կրպակը, մի փոքր այն կողմ՝ հացինը, հետո երշիկեղենի խանութը, որտեղ լոգարանների նմանվող կաթսայիկների մեջ եփվում էին

նրբերշիկներն ու աղիքները: Այդ առատության տեսքից պան Իգնացիի սիրտը փափկեց, և նա կրկին խոսեց, բայց այժմ արդեն այլ տոնով:

— Գիտե՞ս ինչ, հարգելի Ֆրա... դե ի՞նչ էր անունդ:

— Յակուբ,— պատասխանեց նրա դժբախտ զրուցակիցը:

— Ահա գիտե՞ս ինչ, սիրելի Յասեկ... Ես, աստված վկա, մեծ հաճույքով կհյուրասիրեի քեզ: Գուցե մենք որևէ բան... ը-ը բուլկիով աղիք ուտենք, հը՞: Քեզ բան եմ ասում, շատ լավն են: Նույնիսկ նրանց հոտն եմ զգում:

— Եթե դուք այդքան բարի կգտնվեք...

— Լսիր, իսկ գուցե սկզբում օղի, իսկ հետո աղիք, հը՞: Բայց ը-ը կրպակի աղիքները շատ գռեհիկ...

— Էհ, հետո ի՞նչ,— պատասխանեց Յակուբը:

— Իսկ եթե... Ապա լավ լսիր ինձ... Սկզբում օղի, հետո նրբերշիկ, հը՞... Գիտե՞ս, սիրելի Պետրուս... ես հյուրասիրում եմ: Ես և ոչ մեկ ուրիշը: Դե տուր քո մռութը, տուր կտուցիկդ, ես քո...

Այս ասելով, նա թեքվեց աջ և համբուրեց նրա օձիքը, ապա թեքվեց ձախ և քթով կպավ Յակուբի ականջին:

— Ահա թե ինչ, տուր ինձ պարտքով հիսուն կոպեկ: Ավելին պետք չէ, աստված վկա... Ես, գիտե՞ս ինչ, ինձ հետ փող չեմ վերցրել:

— Ի՞նչ եք ասում, ինձ փող որտեղի՞ց,— տխրությամբ պատասխանեց Յակուբը:

— Դու փող չունե՞ս: Նույնիսկ հիսուն կոպե՞կ, թո՛ւհ: Իսկ հետո ուզում էիր, որ քեզ համար խնդրագիր գրեին, հա՞: Եվ ուզում ես օրինակելի, գրագետ մարդկանց հետ թևանցուկ քայլե՞լ... Աստված իմ: Եվ այդ սրիկա Վալեկն ինձ ծանոթացնում է այսպիսի ցնցոտիավորի հետ: Մնաս բարով, Յացուս, ես պետք է մտնեմ այ այն թեյարանը: Այնտեղ գուցե հանդիպեմ որևէ ծանոթի, դեհ, աղյու...

Առանց շրջվելու պան Իգնացին մտավ մի ուրիշ գինետուն և անմիջապես փլվեց նստարանին՝ թողնելով Յակուբին փողոցում, դեպի Վիսլան նայելիս, որից նրան բաժանում էր ընդամենը հարյուր քայլ:

***

Ինչպես էր այստեղ ընկել Յակուբը, որքան էր քնել և ինչպես էր քնել, դժվար էր իմանալ, բայց մայրամուտից քիչ առաջ նա արթնացավ ինչ-որ աղբակույտի վրա: Նա դողացնում էր, սակայն հանգիստ էր և շրջապատում եղածն այժմ ավելի պարզ էր պատկերացնում, քան երբևէ:

Նա քնել էր ուղղակի աղբի վրա: Նրա վրա ոչ մի ուշադրություն չդարձնելով, շուրջը տիրություն էին անում հավերն ու խոզերը, ասես նա անշունչ մի առարկա էր: Բայց Յակուբի համար ամեն ինչ մեկ էր: Իրենից մի քանի քայլ այն կողմ նա տեսավ հին, կեղտոտ, բայց ոչ այնքան պատառոտված մի գլխարկ, որը տղայի համար լավ նվեր կարող էր լիներ: Սակայն նա այնչբարձրացրեց, ինչպես և չէր բարձրացնի այժմ մի պարկ ոսկի անգամ, եթե ընկած լիներ:

Իր զզվելի պառկելատեղից մի փոքր ցած նա տեսավ հավանաբար միմյանց անծանոթ երկու տղաների: Փոքր տղան քար էր նետում ջրի մեջ, իսկ մյուսը՝ հասակով նրանից մի փոքր ավելի բարձր, կարծես մտածում էր այն բանի մասին, թե ինչպես ծանոթանա փոքրիկի հետ: Յակուբը անասելի համակրանք զգաց այդ տղաների նկատմամբ, մեծ հաճույքով նույնիսկ կխոսեր նրանց հետ, սակայն փորձ անգամ չարեց որևէ բառ արտաբերելու, ուստի լուռ շարունակեց լսել:

— Հեյ, դո՛ւ,— հանկարծ գոռաց բարձրահասակ տղան,— նետելուն վերջ կտա՞ս, թե ոչ:

— Իսկ ինչո՞ւ,— ասաց փոքրը:

— Նրա համար, որ եթե վերջ չտաս, կհասցնեմ քիթ ու մռութիդ:

— Օհո՛, իսկ ինչի՞ համար:

— Ձրի մեջ քար նետել չի կարելի: Դու ինչ է, չգիտե՞ս: Մինչ Յակուբը կենտրոնացած ջանում էր հիշել, թե իսկապես գոյություն ունի՞ արդյոք այդպիսի տարօրինակ հրաման, փոքրիկ տղան մոտեցավ մեծին:

— Լակոտ, տեսնո՞ւմ ես վերևում այն ծաղրածուին,— մեծը մատով ցույց տվեց Յակուբի կողմը:

— Գուցե մի երկու անգամ հասցնեմ նրան,— անվճռականորեն հարցրեց փոքրիկը:

— Կրա՛կ,— գոռաց մեծը:

Այդ րոպեին կարծես հրամանով Յակուբի շուրջը մի քանի քարեր սուլեցին: Մեկն ընկավ նրա գլխի մոտ, մյուսը կպավ հիվանդ ոտքին: Յակուբը ցավից տնքաց ու նստեց աղբի վրա: Այդ տեսնելով, տղաները անմիջապես փախան:

— Ես նրանց ի՞նչ եմ արել: Նրանք ի՞նչ են ուզում ինձանից,— փնթփնթաց դժբախտը:

Նա այդ հարցի պատասխանը դեռ չէր հասցրել գտնել, երբ իր ետևում մի կոպիտ ձայն լսեց:

— Օհո՛, թռչնակս, դու նորի՞ց այստեղ ես: Վաղուց չէիր երևում: Յակուբը տնքոցով շրջվեց: Նրա դիմաց կանգնած էր ուժեղ ու բարձրահասակ մի տղամարդ: Հավանաբար դռնապան էր:

— Նորի՞ց որևէ բան ես ուզում գողանալ,— շարունակեց անծանոթը:— Բոլորովին վերջերս դու տախտակներ գողացար, իսկ հիմա նորից ես հայտնվե՞լ, սրիկայի մեկը:

— Ես տախտակ չեմ գողացել,— շշնջաց Յակուբը:

— Իհարկե, այդ դու չէիր, այլ քո եղբայրն էր: Ախ դու, խորամանկ սատանա: Կորի՛ր այստեղից:

Դժբախտը վեր կացավ:

— Աստված իմ, ի՞նչ եք ուզում ինձանից...

— Կորի՛ր այստեղից,— ավելի բարձր գոռաց դռնապանն ու, կատաղորեն բռնելով Յակուբի ուսից, հրեց նրան դեպի ճանապարհը:

Խեղճը նոր միայն զգաց, որ ոտքը սարսափելի ցավում է, գլուխը պտտվում, իսկ լեզուն այնպես է չորացել ծարավից... Նա ուտել էր ուզում, ուզում էր խմել, որևէ տեղ պառկել ու հանգստանալ: Բայց որտե՞ղ: Դատարկ փողոցի անսալահատակված անկյունում փայտերի ետևում տեսավ հին զինվորական շինելը հագին ու կտավե տոպրակը ուսին գցած շեկ մազերով մի աղքատի: Հողի վրա նստած, նա ինչ-որ բան էր դասավորում ծնկներին ու քրթմնջում:

— Մի կտոր հաց Պետրի ու Ագաթայի հոգու հանգստության համար: Հացը լրիվ չոր է: Երեք վարունգ, սա էլ նրա համար, որ աստված անձրև ուղարկի... Գուցե և ուղարկի՞... Ողորմի իրենց...

Յակուբը մոտեցավ նրան:

— Բարեգութ պարոն, գթացեք խեղճ որբին...,— երգեցիկ ձայնով սկսեց ողորմություն խնդրել աղքատն ավելի շատ իր սովորության համաձայն, քան հույս ունենալով, թե որևէ բան կտան իրեն:

Յակուբը կանգնեց:

— Էյ, պապիկ...,— շշնջաց նա,— դուք ինձ որևէ բան կտա՞ք:

— Ե՞ս տամ ձեզ,— զարմացած բացականչեց աղքատը:

— Այո: Դուք այսօր գոնե կերել եք, իսկ ես՝ ոչ:

— Այ քեզ բան: Չե՞ք կերել, կերեք, ձեզ ո՞վ է խանգարում,— փնթփնթաց աղքատը՝ արագորեն հավաքելով իր պաշարը:

— Իսկ եթե ես ուտելու ոչ մի բան չունե՞մ:

— Աշխատիր՝ կունենաս: Դուք կարծում եք, թե մուրացկանները հիմա առաջվա պես հարո՞ւստ են: Սխալվում եք:

— Դե իհարկե, ես ուզում էի փող աշխատել, բայց տեղ չկա:

— Օհո՛, տեղ չկա՞: Այդ դեպքում կախվեք:

— Ես անգամ պարան չունեմ:

— Գողացե՛ք,— բարկացած խոսակցությունն ընդհատեց աղքատը:— Ես ոչ ձեր եղբայրն եմ, ոչ էլ խնամին: Ի՞նչ եք կպել ինձանից:

Խեղճ Յակուբի մեջ նոր ուժով վերականգնվեցին նրա բոլոր ֆիզիկական ու հոգեկան տանջանքները: Նրան թվաց, թե չորս կողմից իրեն անտեսանելի ցանցեր, տանջելու ինչ-որ նոր գործիքներ են սպասում, որոնցից նա ուզում է փախչել: Ուզում էր փախչել իր սեփական արյունոտ ոտքից, իր գլխից, որի ներսում ասես հազարավոր մուրճեր էին հարվածում, սրտի մեջ սուր մեխերի պես ցցված սոված երեխաների հայացքներից, կնոջ հայհոյանքներից, որը հալված մետաղի նման թափվում էր նրա վրա, ամեն, ամեն ինչից:

Այդ դառը մտքերի շարանը կտրեց փշրվող ապակու ձայնն ու գոռոցները:

— Օգնությո՛ւն, օդանցքը կոտրեցին... Բռնի՛ր դրան, բռնի՛ր:

Այդ ինքը կոտրեց օդանցքը, այդ իրեն են ուզում բռնել: Յակուբը ետ նայեց: Այստեղից մինչև իր տուն այնքան էլ հեռու չէր, ուստի նա թեքվեց իր փողոցը և, խառնվելով անցորդներին, անհետացավ դարպասների ետևում:

Բակում նրան կանգնեցրեց տակառագործ Մարթինը:

— Իզուր եք տուն շտապում, Մանկան ինչ-որ տեղ է կորել, ձեր կինն էլ տղայի հետ գնաց նրան փնտրելու, իսկ մնացած երեխաներին փակել է սենյակում:

Յակուբը ոչինչ չպատասխանեց ու վազեց դեպի աստիճաններն ու արագ բարձրացավ տանիք, որտեղ լվացքի պարանն էր կապած ու մի գիրկ ծղոտ կար, որի վրա նա սովորաբար քնում էր: Գրգռվածությունից ու հոգնածությունից շնչահեղձ լինելով և ամբողջ մարմնով դողալով, նա հենվեց գերանին և վախից սարսափած ճգվեց դեպի պատուհանը, կարծես ինչ-որ բանի էր սպասում:

Երկար չսպասեց: Մի քանի րոպե անց բակ մտավ ինչ-որ հրեա՝ մի կնոջ առաջնորդությամբ:

— Մարթին,— ձայն տվեց կինը տակառագործին,— Յակուբը ո՞ր տանն է ապրում:

— Նա ձեր ինչի՞ն է պետք:

— Ինչպե՞ս թե ինչին,— խոսակցությանը խառնվեց հրեան: Նրա համար, որ վճարի կոտրած ապակու գինը:

— Կատաժինա, այդ դո՞ւք եք նրան ցույց տվել ճանապարհը,— հարցրեց տակառագործը:

— Նա այդ բանը ձրի չի արել,— բացատրեց հրեան,— նա իր ծառայության համար օղի կստանա:

— Կատաժինա, դուք երևում է մի բաժակ օղու համար հարազատ հորդ էլ կծախեք,— արհամարհանքով նետեց տակառագործը:

— Ի՞նչ եք անտեղի ջուր ծեծում,— նրան ընդհատեց հրեան։— Կատաժինա, ես ժամանակ չունեմ։ Ցույց տվեք ճանապարհը։

Ամոթահար կինը լռում էր ու ծածուկ նայում այն պատուհանին, ուր կիսախավարի միջից սպիտակին էր տալիս Յակուբի տառապած դեմքը։

— Դե՛, որտե՞ղ է նա, Կատաժինա,— ձեռք չէր քաշում հրեան։

— Ձեռք քաշեք ինձանից,— գոռաց կինը։

Պատուհանից երևացող գլուխը կտրուկ ճոճվեց, դեմքը ջղաձգորեն ծռմռվեց։

— Կորի՛ր այստեղից,— գոռաց Մարթինը հրեային մոտենալով,— ի՞նչ ես ուրիշի տանը գոռգոռում։

Պատուհանից երևացող դեմքը կապտեց։

— Ինչպե՞ս թե կորիր, ի՞նչ է նշանակում կորիր։ Օգնությո՛ւն,— գոռաց կատաղած հրեան, և բակում մեծ աղմուկ բարձրացավ։ Լռեցին այն ժամանակ միայն, երբ երևաց Լեյզեր Սկովրոնեկը։

Տանտերը տուժածին տվեց կոտրված ապակու փողը և նրան հրամայեց հեռանալ։

— Աստված թող ձեզ վարձատրի,— ասաց տակառագործը, հանելով գլխարկը։— Որքան դժբախտություններ թափվեցին նրանց վրա, հիմա էլ երեխան է կորել։

— Երեխան էլ կգտնվի,— նրա խոսքը կտրեց տանտերը,— դեռ ամեն ինչ լավ կլինի։ Ես այսօր նրանց մասին պատմեցի միկույսի, որն ասաց, թե ծերունուն հիվանդանոց կտանեն, Յակուբովային էլ աշխատանք կտան... Գո՛ւտ կլինի։

— Յակուբ,— գլուխը բարձրացնելով կանչեց տակառագործը,— հապա մի ներքև իջիր,— նա հանկարծ լռեց ու վախեցած հարցրեց։— Այդ ի՞նչ է պատահել նրան։

— Այդ ի՞նչ է պատահել,— անմիջապես գունատվելով կրկնեց Սկովրոնեկը՝ պատուհանին նայելով։

Այդ պահին դարպասներից ներս մտավ լվացարարուհին, թևերի վրա գրկած հոգնածությունից քնած աղջկան։ Նրա կողքից վազում էր մեծ տղան, ոգևորությամբ կրծելով հացի մի մեծ կտոր, որն արագորեն հալվում էր։

Տանտիրոջը տեսնելով, Յակուբովան սկսեց շնորհակալություն հայտնել, սակայն վերջինս անհամբերությամբ թափ տվեց ձեռքն ու բարձրացավ վերև։ Նրա ետևից գնացին տակառագործն ու երեխան գրկած լվացարարուհին, հետո բակի մի քանի բերանբացներ։

Տանիքի դռան մոտ տանտերը կանգ առավ։

— Դուք գնացեք առաջ,— ասաց նա տակառագործին։

Սակայն Մարթինը նույնպես ռիսկ չարեց ներս մտնել։ Նա տախտակների արանքից ներս նայեց և սարսափահար ետ քաշվեց։

Յակուբովան ոչինչ չկասկածելով, առաջինը ներս մտավ, իսկ նրա ետևից՝ մնացածները։

— Ախ, Աստվածամա՛յր,— հանկարծ ճչած կինը։— Այս ի՞նչ ես արել, Յակուբ։

— Անմիջապես պետք է ոստիկանություն հայտնել,— ասաց ինչ-որ մեկը։ — Յակուբը կախվել է։

— Պարանը կտրեք, գուցե դեռ ո՞ղջ է։

— Ձեռք չտաք։ Դրա համար դատ է հասնում։

Աղմուկ-աղաղակ բարձրացավ։ Մի քանի վայրկյանում աստիճանների վրա ու միջանցքում հավաքված ամբոխի մեջ ամենազանազան եզրակացություններ էին լսվում։

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ,— ողջ մարմնով դողալով ողբում էր տանտերը,— ինչպիսի սարսափ, ինչպիսի մեղք, ինչպիսի խայտառակություն: Նա ինչո՞ւ է այդ բանն արել: Ես նրանից տան վարձ չէի վերցնում, երեխաներին օգնում էի, նրա համար գնացի կույսերի մոտ... Իսկ նա կախվել է: Ու այդքանից հետո արի ումարդկանց լավություն արա, իսկ նրանք քո բարության փոխարեն այդպես են վարձատրում:

— Մի բարկացեք, պան Լեյզեր,— ասաց նրանից ոչ քիչ հուզված տակառագործը:— Նա դիտմամբ չի արել այդ բանը, հավանաբար խելքը թռցրել է: Նրան աստված էլ կների:

Այսպես հուզվում ու վշտանում էին բարի մարդիկ: Իսկ նրանց առջև տանիքի գերաններին կապված պարանից կախված էր Յակուբի դիակը: Նրա խեղճ գլուխը կախ էր ընկել, սակայն խելագարությունից ծամածռված ու կապտած, սարսափ ու տանջանք դրոշմված դեմքին արդեն տարածվում էր մահվան հանդարտությունը...

1874թ.